

13. Որեաք

Որեաք «մարդիկ» բառին վրայ դանազան մեկնութիւններ ձգած են. երբեմն համեմատուած է իւր ստացականին հետ, երբեմն որ յարաբերականին հետ, երբեմն ուրիշ իզականի մասնիկին հետ և այլն: Ըստ իս եաք յոգնակիի մասնիկով կազմուած բառ մըն է, ինչպէս կը ցուցնեն նոյն բառին կրկնակները՝ որեք (շնորհ. թղթ. եդես.), օրեք (Սարգ. շնորհ. ք. յհ.) կամ որեանք 3հ. կթ. (եան յոգնականակերտ մասնիկով): Բառին արմատականն է որ «մարդ», որուն հետ կը համեմատուի վրաց. երի, հերի «մարդիկ ժողովուրդ»: Այս մեկնութեամբ՝ մէկով կաւելնայ այն սակաւաթիւ օրինակներու թիւը (վանեար, նավկեար ևլն), որով կապացուցուի, թէ աշխարհաբարի եր յոգնականակերտ մասնիկը հին գրաբարի մէջ ալ գոյութիւն ունէր:

Յիշեալ որ-էն տարբեր է որ, ուր արմատը, որմէ Ե և ոյն մասնիկներով ձևացած են որո՛ւ, որի՛ւ, ուրի՛ւ, որոյն և ուրոյն:

4. Ածական.

(Շարունակելի).

Ե Ր Կ Ո Ւ Ե Ղ Բ Ա Յ Ր

Դպրոցական Կեանքից (2. Էսէյքախ)

(ВѢСТНИКЪ ВОСПИТАНІЯ № 8)

Դասերը վերջանալուց յետոյ Կենդողորժը Մերկերին առաջարկեց ընտրութիւն անել 11-ից մինչև երկուսը տանը լինել կամ տաք ուսումնարանում նստարանների վրայ ազատ քնել: Եղբայրները կասկած չկայ «տուն գնալ» չէին ցանկայ. դրա համար էլ մնացին դասարանում:

Կենդողորժը փակեց դասարանը նրանց վրայ ու բանալիքը իր հետ վերցրեց, «որպէս զի նոցա քունը չը խանդարեն» ինչպէս ինքն էր բացատրում նրանց: Խանդարել երեխաների քունը հնարաւորութիւն չկար. երկրորդ դասից յետոյ էլ նոքա գեռ չէին արթնացել, չորրորդ դասն էլ անցաւ, բայց նոքա գեռ քնում էին և հազիւ հազ կարողացան դարթնիլ: Բաց երկնակամարի տակ, սայլերի վերայ, չաւարտած շինութիւններէ մէջ գիշերողների համար տաք վառարանի մօտ, առանց անկո-

դիններն բոլորովին չոր նստարաններն վերայ քնելը թւում էր, թէ ննջում են աղուամաղ, փափուկ վերմակների տակ:

Դպստցական բաղանիսը, վաննան նրանց համար պատրաստ էր. հին շորերը, որ բերել էին ընկերները, նոյնպէս նոցա լաւ եկաւ, աւելին չէր էլ կարելի սպասել, իսկ ծառայի խայտառակուիլը . . . այս ամենից յետոյ նոքա իրենց զգում էին ինչպէս խեղական իշխանազներ:

Մինչդեռ Կենիգսդորֆը քամում էր վաննայի վերջին ջուրը և քանի որ երկու եղբայրները հագում էին ուրիշ իրանց համար նոր շորերը, մնացած աշակերտները մի քանի բոպէ ևս հետաքրքրութիւնից դպրոցի շուրջը անցկացնելով՝ վերջապէս ցիր ու ցան կղան. այդ ժամանակ երկու եղբայրները կրկին դասարան եղան ուսուցչի մօտ. արդէն օրը սկսում էր մթնել:

— Պետրոս, դու քո խոստումը չե՞ս մոռանայ: Դուք վաղը իր ժամանակին դպրոց կը գա՞ք:

— Այո՛:

— Եւ դուք մի՛ լինիք . . .

Այդ հարցի վերայ Կենիգսդորֆը կանգ առաւ:

— Հիմա դուք ո՞ւր էք գնալու, հարցրեց նա մի քիչ լռելուց յետոյ:

— Ես եղբօրս հետ կը գնամ, պատասխանեց փոքրը:

— Իսկ դու ո՞ւր ես գնալու, Պետրոս:

Սա շփոթուած նայեց ուսուցչի վերայ, յանկարծ բարկացաւ և յուսահատ պատասխանեց. — Չգիտեմ:

Միթէ դու չե՞ս կամենում տուն գնալ:

Ոչ. պատասխանեց Պետրոսը և համարեա ուսուցչի վերայ ձգեց թշնամական հայեացք, որ իրան այդպէս հարցեր էր տալիս: Նեղլիկ դռնաւոր երեսի վերայ նուրբ դժագրութիւնով դէմքը արտայայտեց վճռական հայեացքի կամակորութիւն. միայն թէ այդ ֆօնը մի վայրկյան տւեց. միւս կողմից երեւան կծկւում էր սպասելով ուղիղ հարուածի ու նորա տանջուած դէմքը միանգամից պատկերացրեց ծերի և հոգսերով ծանրաբեռնուածի տեսք:

— Դու տուն չե՞ս երթայ:

— Ո՛չ, պարոն ուսուցիչ:

— Պատճառն ի՞նչ է, տխուր կիկիծով հարցրեց Կենիգսդորֆը և նայեց նրա վրայ ըստն անբաւականութեամբ:

Մինչ այդ՝ նա շտապ պատառեց եղբօր բաճկոնակը, քանդեց նրա շապիկի կոճակները ու դէն շարտեց: Տղայի թիակներն մէջ երևեցաւ մի մեծ արեւնալի վէր:

— Աստուած իմ, երկիւղից ըացականչեց Կենիդոգորֆ, այդ ո՞վ է արել:

— Նա, պատասխանեց եղբայրներից մեծը. դուրս հետ էլ տատամները սկսեցին զընդ զնգաւ, կարծես տենդի մէջ լինէր. և նա դողդողում էր գլխից մինչև ոտները:

— Ո՞վ. հարցրեց ուսուցիչը, կարծես թէ հարցը չմոլունեց:

— Նա . . .

— Հայրդ:

— Այո՛, նա:

Խուլ՝ ինչպէս դատաւիճիւ, դուրս թաւ մանկական անմեղ շրթունքներից. — նա . . .

— Ուսուցիչը մի բոպէ լուռ կանգնած էր. նրա շունչը կտրոււմ էր. նրան այնպէս էր թւում, որ սենեակի օդը իր համար քիչ է. շիմա ի՞նչ տեսմ, ի՞նչ անեմ. անցնում էր նրա մտքից:

Քանի որ Պետրոսը օգնում էր եղբօրը հագնելու, ուսուցիչը մի քանի անգամ յետ ու առաջ անելուց յետոյ, վերջապէս կանգնեց երեխաների առաջ:

— Դնանք միասին ինձ մօտ, առ ժամանակ ապրէք իմ սենեակի կտրի տակ:

Կամենում էր: Այնտեղ ինչ որ էլ լինի, վառարան կայ, տաք կը լինի. ուղիւմ էր իմ մօտ գալ:

— Այո՛, ուրախութիւնից իսկոյն ըացականչեցին երեխաները:

Կրկին անգամ երիտասարդ ուսուցիչը խոր ախ քաշեց, իսկ յետոյ ուղեկցեց երկու անպաշտպան երեխաներին դէպի իր տունը:

IV

Կենիդոգորֆի այրի տանտիկինը կտրի տակի սենեակը մի լաւ տաքացրեց, երեխաների համար խոտից երկու հատ խոտկուռ շինեց, վաղտոները յարմարեցնելով անկողիններ պատուրաստեց. իսկ այդ ամենը վերջացնելուց յետոյ ուսուցիչ յանձնարարութեամբ կուշտ կերակրեց:

Կենիդոգորֆը իր ձեռքով խոհանոցի լամպը պատի վերայ, որչափ հնարաւոր էր, բարձր ամրացրեց, երեխաներին էլ պատուիրեց, որ չլինի թէ ձեռք տան. ապա բերեց նրանց համար մի քանի հատ պատկերազարդ դրքեր ու առաց — ես կրկին կը գամ ձեզ աեսութեան ու հեռանալով յետեւից ծածկեց դուռը:

Այդ ամենի դէմ երեխաները ոչինչ չունէին. — նրանց այ-

լանդակ դէմքերը չափազանց ժպտում ու փայլում էին բաւականութիւնից. նրանք իրանց զգում էին, ինչպէս թռչուններ տաք բների մէջ:

Կենիգսդորֆը իր սենեակում մի քանի ըոպէ տատանուելուց յետոյ վերջապէս վճռական կերպով հագաւ վերարկուն և արագ-արագ քայլերով դնաց երեխաների հօր բնակարանը: Նա նրան տանը չգտաւ: Իր այցեատուրը ներս ձգեց դռան ճեղքից և յաղթանդամ կնոջն էլ յանձնարարեց, որը ապրում էր հէնց այդ բնակարանի նախագաւթում, որ ասէ Մերկին թէ իր մօտ էր եկել ուսուցիչը մի կարևոր գործի մասին իրեն հետ խօսելու և թէ խնդրում է, հէնց այս երեկոյ անպատճառ դայ իր մօտ այդ անյետաձգելի գործի համար:

— Նա այսօր կրկին դատարան դնալու հրաւեր է ստացել, աւելացրեց կինը ցոյց տալով դեղին թուղթը: Զբոնի՛ր թէ դուք այդ հրաւերի համար էք ուղում նրա հետ աեսնուիլ:

— Պ. Մերկը ինձ մօտ հրաւիրուելու պատճառը գիտէ, որի համար ես ցանկանում եմ նրա հետ խօսել՝ պատասխանեց Կենիգսդորֆը, որով շուգեց աւելորդ բամբասանքի նիւթ մատակարարած լինել այդ խանութ սանամօրը:

Դեռ կէս ժամ չէր անցել, երբ նա վերադարձել էր տուն, որ գուռը ձեծեցին:

— Խնդրեմ՝ մօտէք:

Դռան շէմքի վերայ երևաց մի մարդ, որի արտաքինը ամենևին փաստութիւն չէր զարթեցնում: Անհանգիստ անկայուն հայեացքը, շնչասպառ շնչառութիւնը և ըստը շարժմունքները ցոյց էին տալիս, որ նա գտնւում է վերին աստիճանի յուզուած վիճակի մէջ: Դուռը նա իր յետևից բաց էր թողել:

— Բարև ձեզ. դուք ի՞նչ էք ուղում ինձանից:

— Նա ցանկանում եմ, Մերկ, ձեզ հետ զրոյց անել այդ խօսքերից յետոյ Կենիգսդորֆի դէմքի վերայ երևաց անհանգստութեան նշան:

— Ի՛յ: Ահա և ես: Ի՞նչ էք ուղում ինձանից:

Մերկն ամեն մի խօսքը, ամեն շարժումը. ապացուցանում էին, թէ ինքը Կենիգսդորֆին համարում է իր անձնական թշնամին:

— Հարցերը կանգնած չեն վճռում. այն էլ մի քանի խօսքերով և Կենիգսդորֆը փակեց դուռը, խնդրեմ նստեցէք:

— Ինչո՞ւ համար:

Առանց այն էլ քեզ համար բաւական նստեցի:

— Ինձ համար նստաք:

— Այո՛, ձեզ համար:

— Միթէ դուք կարծում էք, որ ինձ բուռնականութիւն է պատճառում այն, որ դուք ըսնտարկուել էք:

Հասկացէք, որ ես ծառայող եմ և աստիճանաւոր. երդուել եմ և պարտական եմ կատարել իմ պարտքը: Եթէ քո որդիները զլանում են դպրոց յաճախել, ես պարտական եմ այդ արձանագրել գրքում: Եթէ վերստուգութեան ժամանակ իմ գրքերը կարգին չգտնեն, միթէ դո՛ւք էք պատասխանատու իմ փոխարէն: Դուք ի՞նչպէս էք այդպիսի բան մտածում:

— Այո... բայց...

— Մերկ, երբ առաջին անգամ լճուեցին ձեզ բանտ նըստեցնել, ես ձեզ ոչ մի անգամ իմ կեանքում չէի տեսել և չէի էլ ճանաչում: Միթէ ես կարո՞ղ էի ձեր գէ՛մ անձնական օրակցէ մի բան ունենալ...

— Ո՛չ... բայց...

Մերկը գլխարկը աւելի աչքերը քաշեց, որը ամենևին դըլխից հանած էլ չէր:

— Դուք, երևի, մտածում էք, որ ես ձեզ թշնամի՞ եմ...

Բայց ընդհակառակը: Ինձ ձեզ համար մի քանի անգամ դատարանին հրաւիրել: Հրաւիրել են ինչպէս լկայ և ոչ թէ մեղադրող. մեղադրողը եղել է անըող օրէնքը:

Ես ձեզ համար կորցրել եմ իմ ազատ ժամերը վազելով դատարան, չէ՞ որ ես դրա համար ոչինչ չեմ ստացել և ոչ մի անձնական օգուտ էլ չեմ ունեցել: Ես ձեզ ոչ բարեկամ և ոչ էլ թշնամի եմ. այլ վերաբերւում եմ գէպի ձեզ առանց խնայութեան:

— Ուրեմն այդպէս.

— Ի հարկէ: Միթէ ես պարտական եմ ձեր որդիների համար ազատ միջոցիս, այն էլ պարտաժողովներին յետոյ, դատաւաններում քաշ գալ:

— Ինձ ըսնտ նստեցնելու, կատաղեց Մերկը:

Ինձ անպատուում են, իսկ ես պէտք է լռեմ և էլի դուրս է դալիս, որ ես եմ անամօթը՝ անպիտանը, իսկ զգուշի կինս — լիբը...

— Հէնց այդ մասին էլ ես ձեզ հետ ցանկանում են խօսել. հիմա դուք նստէք. չէ՞ որ կանգնած չի կարելի այդպիսի կարևոր խնդիրների մասին դատել:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԹԱՐԳ. ՆՐԵՄԻԱ ՎԱՐԳԱԿԵՍ